**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3**

**ք. Երևան** **30 մարտի 2018թ.**

ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտեն /այսուհետ՝ Կոմիտե/, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հարությանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աբակ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, քրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 700 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական

օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 9396000 (ինը միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ, որից 1566000 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxՃԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է,

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է,

ՃԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է,

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է,

ՎԳՏ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի

կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
Հ/Հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար

Վ. Հարությյան ---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Աբակ» ՍՊԸ
Հասցե՝ Սիլիկյան թաղ. 1փ. 20տ
ՀԷԲ Շահումյան մ/ճ
Հ/Հ 163028028518
ՀՎՀՀ 0[illegible]22825

Ա. Սարգսյան ---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 1
ՀՀ ԿԱՄԳԿՊԿ-ԳՀԱԾՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]*

## «Երևան» տարածքային ստորաբաժանման արխիվային տարածքի նորոգման աշխատանքների կատարման

### Նախահաշիվ N1-1 Շինարարական աշխատանքներ

Ինդեքսավորումը: աշխատավարձին 1965.3; մեք. և մեխ. շահագործմանը 2789.9; Տրանսպորտային ծախսերի գործակիցը 1.0572

Շինարարական աշխատանքների արժեքը - 10621.10 հազ. դր.

| NN | Հիմնավորումը | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Ծավալը | 1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./ | Այդ թվում՝ | | | | | | | | | Ընդհանուր արժեքը | Նյութերի արժեքը | Նյութերի արժեքը x1.02x1.05 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Աշխատավարձը | | Մեքենա-մեխ. շահագործումը | | Նյութերի ծախսը և արժեքը 1 միավորի համար | | | | | | | 1.057 |
| | | | | | | լավ նորմերի | գործող գներով | լավ նորմերի | գործող գներով | անվանումը | չափման միավորը | քանակը | արժեքը | ընդհանուր մեծությունը | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| | | **Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ** | | | | | | | | | | | | | | | |
| 1 | E46-124 | Դռների ապամոնտաժում | $մ^2$ | 58.6 | 1.17 | 0.457 | 0.90 | 0.098 | 0.27 | | | | | | 68.65 | | |

[1] Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ բոլոր աշխատանքների կատարման արժեքների

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | E46-80 | Թեթևաբետոնե բլոկներից միջնորմների քանդում /200մմ հաստության/ | մ² | 41.8 | 7.79 | 2.4 | 4.72 | 1.1 | 3.069 | | | | | | 325.43 | | |
| 3 | P11-225 | Գաջի սվաղի քանդում պատերից | մ² | 608 | 0.77 | 0.39 | 0.77 | | | | | | | | 466.01 | | |
| 4 | P11-229 | Գաջի սվաղի քանդում առաստաղներից | մ² | 50 | 1.00 | 0.51 | 1.00 | | | | | | | | 50.11 | | |
| 5 | E46-121 | Լինոլեումից հատակի քանդում | մ² | 756.9 | 0.15 | 0.0743 | 0.15 | | | | | | | | 110.52 | | |
| 6 | E46-119 | Հատակի ցեմենտ-ավազային հարթեցնող շերտի քանդում /30մմ հաստության/ | մ² | 68.4 | 0.41 | 0.1445 | 0.3 | 0.0468 | 0.13 | | | | | | 28.36 | | |
| 7 | C310-13 տ.մ.կ. 29 | Շին. աղբի հավաքում, բարձում ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տ | 120.8 | 2.86 | 0.18 | 0.35 | 0.9 | 2.51 | | | | | | 346.05 | | |
| | | <u>Կառուցողական աշխատանքներ</u> | | | | | | | | | | | | | | | |
| 1 | E10-300 | Միջնորմների կառուցում գիպսաստվարաթղթե սալերից 100մմ հաստությամբ, մետաղական հիմնակմախքով, ջերմամեկուսացմամբ, երկկողմանի սալապատումով δ=100մմ | մ² | 20.3 | 6.63 | 1.11 | 2.18 | 0.055 | 0.15 | գ/ս/թ սալեր | մ² | 2.1 | 1.05 | 2.205 | 134.50 | 3.79 | 4.29 |
| | | | | | | | | | | մետ. հիմնակմախք | կգ | 1.24 | 0.4 | 0.496 | | | |
| | | | | | | | | | | ռետին | կգ | 0.074 | 0.4 | 0.0296 | | | |
| | | | | | | | | | | ինք պտուտակներ | կգ | 0.06 | 1.85 | 0.111 | | | |
| | | | | | | | | | | ծածիկ | կգ | 0.5 | 0.165 | 0.0825 | | | |
| | | | | | | | | | | փ/պլաստ 60մմ | մ² | 1.03 | 0.84 | 0.8652 | | | |
| 2 | 14-290 | Թուջե մարտկոցների | 100մ2 | 1.280 | 90.28 | 35.1 | 68.98 | 0.01 | 0.03 | ռիֆ | կգ | 8.6 | 0.797 | 6.8542 | 115.56 | 18.78 | 21.27 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | յուղաներկում 2 անգամ | | | | | | | | բեկիա | կգ | 13.6 | 0.7 | 9.52 | | | |
| | | | | | | | | | | ներկ | կգ | 2.4100 | 1 | 2.41 | | | |
| 3 | P5-85 P5-86 | Ցեմ.ավազե նախաշերտի իրականացում 30մմ հաստ | մ$^2$ | 68.4 | 1.20 | 0.1400 | 0.28 | 0.0100 | 0.03 | ցեմ. շաղախ | մ$^3$ | 0.0306 | 26 | 0.7956 | 82.34 | 0.80 | 0.90 |
| 4 | E11-191 կիր. | Լամինատե հատակի պատրաստում /ներառյալ սալոնը և շրիշակները/ | մ$^2$ | 144.06 | 4.77 | 0.43 | 0.85 | 0.03 | 0.08 | լամինատե հատակ | մ$^2$ | 1 | 3.389 | 3.389 | 686.59 | 3.39 | 3.84 |
| 5 | E11-205 | Հատակների պատրաստում լինոլեումից | մ$^2$ | 623.8 | 4.19 | 0.436 | 0.86 | 0.0075 | 0.02 | լինոլեում | մ$^2$ | 1.02 | 2.589 | 2.64078 | 2615.74 | 2.93 | 3.32 |
| | | | | | | | | | | սոսինձ | կգ | 0.5 | 0.575 | 0.2875 | | | |
| 6 | E11-135 | Խեցեսալե հատակի պատրաստում | մ$^2$ | 12.8 | 5.65 | 0.614 | 1.21 | 0.045 | 0.13 | խեցեսալ | մ$^2$ | 1.02 | 3.222 | 3.28644 | 72.38 | 3.82 | 4.32 |
| | | | | | | | | | | սոսինձ | կգ | 4.5 | 0.118 | 0.531 | | | |
| 7 | E15-247a | Առաստաղի գաջե սվաղում բարելավված որակի | մ$^2$ | 64 | 2.48 | 0.74 | 1.45 | 0.128 | 0.36 | գաջ | տ | 0.0265 | 22.182 | 0.58782 | 158.12 | 0.59 | 0.67 |
| | | | | | | | | | | ջուր | մ$^3$ | 0.0079 | 0.15 | 0.00119 | | | |
| 8 | E15-661 | Առաստաղների ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով | մ$^2$ | 765.70 | 1.08 | 0.289 | 0.57 | 0.01 | 0.03 | լատեքս. ներկ | կգ | 0.63 | 0.528 | 0.33264 | 823.32 | 0.42 | 0.48 |
| | | | | | | | | | | ծեփամածիկ | կգ | 0.55 | 0.165 | 0.09075 | | | |
| 9 | E15-246a | Պատերի գաջե սվաղում բարելավված որակի | մ$^2$ | 143 | 2.08 | 0.58 | 1.14 | 0.12 | 0.33 | գաջ | տ | 0.0241 | 22.182 | 0.53459 | 296.77 | 0.54 | 0.61 |
| | | | | | | | | | | ջուր | մ$^3$ | 0.0071 | 0.15 | 0.00107 | | | |
| 10 | E15-660 | Պատերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով, ներառյալ չնաքոր | մ$^2$ | 1174 | 0.95 | 0.231 | 0.45 | 0.009 | 0.03 | լատեքս. ներկ | կգ | 0.63 | 0.528 | 0.33264 | 1116.48 | 0.42 | 0.47 |
| | | | | | | | | | | ծեփամածիկ | կգ | 0.51 | 0.165 | 0.08415 | | | |
| 11 | E15-568 | Պատերի յուղաներկում | մ$^2$ | 33 | 0.99 | 0.278 | 0.55 | 0.008 | 0.02 | նախաներկում | կգ | 0.075 | 0.233 | 0.01748 | 33.18 | 0.38 | 0.42 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բարելավված որակի, ծեփամածկումով, ներառյալ շնչերը | | | | | | | | յուղաներկ | կգ | 0.183 | 1 | 0.183 | | | |
| | | | | | | | | | | ծեփամածիկ | կգ | 0.51 | 0.165 | 0.08415 | | | |
| | | | | | | | | | | տրորված ներկ | կգ | 0.0007 | 0.7 | 0.00049 | | | |
| | | | | | | | | | | օլիֆ | կգ | 0.113 | 0.797 | 0.09006 | | | |
| 12 | շուկա | Տախտակե հենարաններ հատակի վրա | մ$^3$ | 3.2 | 158.83 | | | | | տախտակներ | մ$^3$ | 1 | 140.28 | 140.278 | 508.26 | 140.28 | 158.83 |
| 13 | շուկա | Ներքին միափեղկ մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սալիկերը, կողպեքները, ներկումը (ապակեպատումը անհրաժեշտության դեպքում)/ (արտերկիր) | մ$^2$ | 12.63 | 32.22 | | | | | մեկ դուռ | մ$^2$ | 1 | 32.222 | 32.222 | 406.96 | 32.22 | 32.22 |

Ընդամենը /հազ. դր./ 8445.33

Վերադիր ծախսեր 13.3% 1123.23

Ընդամենը /հազ. դր./ 9568.55

Շահույթ 11% 1052.54

Ընդամենը /հազ. դր./ 10621.10

Նախահաշիվ N1-2 Ներքին կոյուղի

Ինքնարժեքը: աշխատավարձին 1965.28

մեք. և սարք. շահագործմանը 2789.86

Շինարարական աշխատանքների արժեքը - 153.62 հազ. դր.

Տրանսպորտային ծախսերի գործակիցը 1.0572

| NN | Հիմնավորումը | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Ծավալը | 1 միավորի ընդհանուր արժեքը /ն/տ. թվ./ հազ. դր./ | Այդ թվում՝ Աշխատավարձը ըստ նորմերի | Աշխատավարձը գործող գներով | Մեքենա-մեխ. շահագործումը ըստ նորմերի | Մեքենա-մեխ. շահագործումը գործող գներով | Նյութերի ծախսը և արժեքը 1 միավորի համար: անվանումը | չափման միավորը | քանակը | արժեքը | ընդհանուր արժեքը | Ընդհանուր արժեքը հազ. դրամ | Նյութերի արժեքը հազ. դրամ | Նյութերի արժեքը x1.02x1. 1.0572 հազ. դր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 1 | E16-34 | Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիէթիլենային խողովակներից Ø110մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 8 | 1.66 | 0.37 | 0.73 | 0.01 | 0.03 | խողովակ | գմ | 0.998 | 0.717 | 0.71557 | 13.27 | 0.80 | 0.90 |
| | | | | | | | | | | ամրակապ | կգ | 0.235 | 0.35 | 0.08225 | | | |
| 2 | E16-33 | Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիէթիլենային խողովակներից Ø50մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 3 | 1.17 | 0.38 | 0.75 | | | խողովակ | գմ | 0.998 | 0.323 | 0.32235 | 3.50 | 0.37 | 0.42 |
| | | | | | | | | | | ամրակապ | կգ | 0.14 | 0.35 | 0.049 | | | |
| 3 | E22-365 | Ձևավոր մասեր Ø110մմ | հատ | 3 | 1.46 | 0.231 | 0.45 | 0.151 | 0.42 | ձևավոր մաս | հատ | 1 | 0.518 | 0.518 | 4.39 | 0.52 | 0.59 |
| 4 | E17-28 | Կերամիկական լվացարանների տեղադրում սիֆոնով | հատ | 2 | 18.13 | 1.06 | 2.08 | 0.06 | 0.17 | լվացարան սիֆոնով | հատ | 1 | 11.111 | 11.111 | 36.27 | 14.03 | 15.8[illegible] |
| | | | | | | | | | | ծորակ | հատ | 1 | 2.917 | 2.917 | | | |
| 5 | E17-61 | Կերամիկական զուգարանակոնքերի տեղադրում բաքով | հատ | 2 | 25.56 | 1.49 | 2.93 | 0.13 | 0.36 | զուգարանակոնք | հատ | 1 | 19.669 | 19.669 | 51.12 | 19.67 | 22.2[illegible] |
| 6 | շուկա | Կոյուղու ճկուն խողովակ | հատ | 2 | 0.79 | | | | | ճկուն խողովակ | հատ | 1 | 0.7 | 0.7 | 1.59 | 0.70 | 0.79 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | E16-218<br>K=0.5 | Միացում գործող ցանցին ∅100մմ | տեղ | 2 | 6.01 | 2.585 | 5.08 | 0.015 | 0.04 | խցափականը | հատ | 1 | 0.19 | 0.19 | 12.02 | 0.78 | 0.89 |
| | | | | | | | | | | օդացոտի | հատ | 1 | 0.214 | 0.214 | | | |
| | | | | | | | | | | եռաբաշխիչ | հատ | 1 | 0.38 | 0.38 | | | |

| | |
|---|---|
| Ընդամենը /հազ. դր./ | 122.15 |
| Վերադիր ծախսեր 13.3% | 16.25 |
| Ընդամենը /հազ. դր./ | 138.40 |
| Շահույթ 11% | 15.22 |
| Ընդամենը /հազ. դր./ | 153.62 |

Նախահաշիվ N1-3 էլեկտրալուսավորություն

Ինդեքսավորումը ախտատավարժին 1965.28

**Շինարարական աշխատանքների արժեքը - 978.05 հազ. դր.**

Մեք. և սարք. շահագործումը 2789.86

Տրանսպորտային ծախսերի գործակիցը 1.0572

| NN | Հիմնավորումը | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Ծավալը | 1 միավորի ընդհանուր արժեքը /ք/ս. բաղ. հազ. դր./ | Այդ թվում` Աշխատավարձը ըստ նորմերի | Աշխատավարձը գործող գներով | Մեքենա-մեխ. շահագործումը ըստ նորմերի | Մեքենա-մեխ. շահագործումը գործող գներով | Նյութերի ծախսը և արժեքը 1 միավորի համար: անվանումը | չափման միավորը | Քանակը | արժեքը | ընդհանուր արժեքը | Ընդհանուր արժեքը հազ. դրամ | Նյութերի արժեքը հազ. դրամ | Նյութերի արժեքը x1.02x1.05x 1.0572 հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 1 | 8-402-2 | ППВ-2x2.5մմ² հատույթով, հաղորդալարի անցկացում սվաղի տակ | գմ | 360 | 0.49 | 0.0755 | 0.15 | 0.0371 | 0.10 | հաղորդալար | գմ | 1.03 | 0.2 | 0.206 | 174.65 | 0.21 | 0.23 |
| 2 | 8-402-2 | ППВ-2x4մմ² հատույթով, հաղորդալարի անցկացում սվաղի տակ | գմ | 50 | 0.62 | 0.0755 | 0.15 | 0.0371 | 0.10 | հաղորդալար | գմ | 1.03 | 0.315 | 0.32445 | 30.96 | 0.32 | 0.37 |
| 3 | 8-402-2 | ППВ-2x6մմ² հատույթով, հաղորդալարի անցկացում սվաղի տակ | գմ | 10 | 0.78 | 0.0755 | 0.15 | 0.0371 | 0.10 | հաղորդալար | գմ | 1.03 | 0.45 | 0.4635 | 7.77 | 0.46 | 0.52 |
| 4 | 8-591-10 | Երկստեղնավոր անջատիչների տեղադրում | հատ | 1 | 1.72 | 0.298 | 0.59 | 0.0004 | 0.001 | անջատիչ | հատ | 1 | 1 | 1 | 1.72 | 1.00 | 1.13 |
| 5 | 8-591-2 | Մեկստեղնավոր անջատիչների տեղադրում | հատ | 11 | 1.36 | 0.113 | 0.22 | 0.0005 | 0.001 | անջատիչ | հատ | 1 | 1 | 1 | 14.91 | 1.00 | 1.13 |
| 6 | շուկա | Տուփեր անջատիչների և վարդակների տեղադրման | հատ | 45 | 0.08 | | | | | տուփ | հատ | 1 | 0.075 | 0.075 | 3.82 | 0.08 | 0.08 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | համար | | | | | | | | | | | | | | | |
| 7 | շուկա | Տուփեր ճյուղավորման | հատ | 10 | 0.11 | | | | | տուփ | հատ | 1 | 0.1 | 0.1 | 1.13 | 0.10 | 0.11 |
| 8 | 8-591-7 | Մեկտեղանի վարդակների տեղադրում | հատ | 43 | 1.38 | 0.125 | 0.25 | 0.0002 | 0.001 | վարդակ | հատ | 1 | 1 | 1 | 59.27 | 1.00 | 1.13 |
| 9 | 8-601-2 | Լուսատուների ապամոնտաժում և նույնի մոնտաժում 2x36վտ լամպով | հատ | 20 | 2.30 | 0.349 | 0.69 | 0.301 | 0.84 | լուսատու | հատ | 1 | | | 46.09 | 0.69 | 0.78 |
| | | | | | | | | | | լամպ | հատ | 2 | 0.344 | 0.688 | | | |
| 10 | 8-601-2 | Լուսատուների ապամոնտաժում և նույնի մոնտաժում 2x18վտ լամպով | հատ | 20 | 2.09 | 0.349 | 0.69 | 0.301 | 0.84 | լուսատու | հատ | 1 | | | 41.84 | 0.50 | 0.57 |
| | | | | | | | | | | լամպ | հատ | 2 | 0.25 | 0.5 | | | |
| 11 | 8-601-2 | Լուսատուների տեղադրում լյումինեսցենտային լամպերով 2x36Վտ /առաստաղի/ | հատ | 36 | 6.72 | 0.349 | 0.69 | 0.301 | 0.84 | լուսատու | հատ | 1 | 3.9 | 3.9 | 241.94 | 4.59 | 5.19 |
| | | | | | | | | | | լամպ | հատ | 2 | 0.344 | 0.688 | | | |
| 12 | 8-601-3 | Լուսատուների լամպեր 1x18Վտ /առաստաղի/ | հատ | 14 | 5.82 | 0.349 | | 0.301 | 0.84 | լուսատու | հատ | 1 | 3.9 | 3.9 | 81.50 | 4.40 | 4.98 |
| | | | | | | | | | | լամպ | հատ | 2 | 0.25 | 0.5 | | | |
| 13 | 8-612-5 | Ավտոմատ անջատիչների բաշխիչ տուփ 12 մոդուլի | հատ | 2 | 9.19 | 1.64 | 3.22 | 0.06 | 0.17 | վահան | հատ | 1 | 5.8 | 5.8 | 18.38 | 5.80 | 5.80 |
| 14 | 8-525-2 | Անջատիչ գծային մեքենա 40Ա | հատ | 2 | 3.42 | 1.04 | 2.04 | 0.06 | 0.17 | ավտ.-անջատիչ | հատ | 1 | 1.208 | 1.208 | 6.84 | 1.21 | 1.21 |
| 15 | 8-525- | Անջատիչ գծային մեքենա 25Ա | հատ | 6 | 3.25 | 1.04 | 2.04 | 0.06 | 0.17 | ավտ.-անջատիչ | հատ | 1 | 1.042 | 1.042 | 19.52 | 1.04 | 1.04 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2 | | | | | | | | | | | | | | | | |
| 16 | 8-525-2 | Անջատիչ գծային միաբևեռ 32Ա | հատ | 8 | 3.42 | 1.04 | 2.04 | 0.06 | 0.17 | ավտ.-անջատիչ | հատ | 1 | 1.208 | 1.208 | 27.35 | 1.21 | 1.21 |

| | |
|---|---|
| Ընդամենը /հազ. դր./ | 777.70 |
| Վերադիր ծախսեր 13.3% | 103.43 |
| Ընդամենը /հազ. դր./ | 881.13 |
| Շահույթ 11% | 96.92 |
| Ընդամենը /հազ. դր./ | 978.05 |

## Աշխատանքների ծավալների ամփոփագիր

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |

## Շինարարական աշխատանքներ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Քանդման եւ ապամոնտաժման աշխատանքներ | | | | |
| 1 | Դռների ապամոնտաժում | մ² | 58.6 | 1.41 | 82.50 |
| 2 | Թեթեւաբետոնե բլոկերից միջնորմների քանդում /200մմ հաստությամբ/ | մ³ | 41.8 | 9.36 | 391.07 |
| 3 | Գաջի սվաղի քանդում պատերից | մ² | 608 | 0.92 | 559.99 |
| 4 | Գաջի սվաղի քանդում առաստաղներից | մ² | 50 | 1.20 | 60.22 |
| 5 | Լինոլեումից հատակի քանդում | մ² | 756.9 | 0.18 | 132.81 |
| 6 | Հատակի ցեմենտ-ավազային հարթեցնող շերտի քանդում /30մմ հաստության/ | մ² | 68.4 | 0.50 | 34.07 |
| 7 | Շին. աղբի հավաքում, բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 13կմ | տ | 120.8 | 3.44 | 415.83 |
| | Կառուցողական աշխատանքներ | | | | 0.00 |
| 1 | Միջնորմների կառուցում գիպսաստվարաթղթե սալերից 100մմ հաստությամբ, մետաղական հիմնակմախքով, ջերմամեկուսացմամբ, երկկողմանի սալապատումով δ=10մմ | մ² | 20.3 | 7.96 | 161.62 |
| 2 | Թուջե մարտկոցների յուղաներկում 2 անգամ | 100մ2 | 1.280 | 108.48 | 138.86 |
| 3 | Ցեմ.ավազե նախաշերտի իրականացում 30մմ հաստ | մ² | 68.4 | 1.45 | 98.95 |
| 4 | Լամինատե հատակի պատրաստում /ներառյալ սպունգը եւ շրիշակները/ | մ² | 144.06 | 5.73 | 825.05 |
| 5 | Հատակների պատրաստում լինոլեումից | մ² | 623.78 | 5.04 | 3143.25 |
| 6 | Խեցեսալե հատակի պատրաստում | մ² | 12.8 | 6.79 | 86.97 |
| 7 | Առաստաղի գաջե սվաղում բարելավված որակի | մ² | 64 | 2.98 | 190.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Առաստաղների ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով | մ² | 765.70 | 1.29 | 989.36 |
| 9 | Պատերի գաջե սվաղում բարելավված որակի | մ² | 143 | 2.50 | 356.62 |
| 10 | Պատերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով, ներառյալ շպակը | մ² | 1174 | 1.14 | 1341.64 |
| 11 | Պատերի յուղաներկում բարելավված որակի, ծեփամածկումով, ներառյալ շպակը | մ² | 33 | 1.19 | 39.87 |
| 12 | Տախտակե հենարաններ հատակի վրա | մ³ | 3.2 | 190.86 | 610.76 |
| 13 | Ներքին միափեղկ մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները, ներկումը (ապակեպատումը անհրաժեշտության դեպքում)/ (արտերկիր) | մ² | 12.63 | 38.72 | 489.04 |
| | **Ներքին կոյուղի** | | | | |
| 1 | Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիէթիլենային խողովակներից Ø110մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 8 | 1.99 | 15.94 |
| 2 | Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիէթիլենային խողովակներից Ø50մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 3 | 1.40 | 4.21 |
| 3 | Ձեւավոր մասեր Ø110մմ | հատ | 3 | 1.76 | 5.27 |
| 4 | Կերամիկական լվացարանների տեղադրում սիֆոնով | հատ | 2 | 21.79 | 43.58 |
| 5 | Կերամիկական զուգարանակոնքերի տեղադրում բաքով | հատ | 2 | 30.72 | 61.43 |
| 6 | Կոյուղու ճկուն խողովակ | հատ | 2 | 0.95 | 1.90 |
| 7 | Միացում գործող ցանցին Ø100մմ | տեղ | 2 | 7.22 | 14.44 |
| | **Էլեկտրալուսավորություն** | | | | |
| 1 | ППВ-2x2.5մմ² հատվածքով, հաղորդալարի անցկացում սվաղի տակ | գմ | 360 | 0.58 | 209.87 |
| 2 | ППВ-2x4մմ² հատվածքով, հաղորդալարի անցկացում սվաղի տակ | գմ | 50 | 0.74 | 37.21 |
| 3 | ППВ-2x6մմ² հատվածքով, հաղորդալարի անցկացում սվաղի տակ | գմ | 10 | 0.93 | 9.33 |
| 4 | Երկստեղնանվոր անջատիչների տեղադրում | հատ | 1 | 2.07 | 2.07 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 5 | Մեկտեղնավոր անջատիչների տեղադրում | հատ | 11 | 1.63 | 17.92 |
| 6 | Տուփեր անջատիչների եւ վարդակների տեղադրման համար | հատ | 45 | 0.10 | 4.59 |
| 7 | Տուփեր ճյուղավորման | հատ | 10 | 0.14 | 1.36 |
| 8 | Մեկտեղանի վարդակների տեղադրում | հատ | 43 | 1.66 | 71.23 |
| 9 | Լուսատուների ապամոնտաժում և նույնի մոնտաժում 2x36վտ լամպով | հատ | 20 | 2.77 | 55.39 |
| 10 | Լուսատուների ապամոնտաժում և նույնի մոնտաժում 2x18վտ լամպով | հատ | 20 | 2.51 | 50.27 |
| 11 | Լուսատուների տեղադրում լյումինեսցենտային լամպերով 2x36Վտ /առաստաղի/ | հատ | 36 | 8.08 | 290.73 |
| 12 | Լուսատուների լամպեր 1x18Վտ /առաստաղի/ | հատ | 14 | 7.00 | 97.94 |
| 13 | Ավտոմատ անջատիչների բաշխիչ տուփ 12 մոդուլի | հատ | 2 | 11.04 | 22.09 |
| 14 | Անջատիչ գծային միաբևեռ 40Ա | հատ | 2 | 4.11 | 8.22 |
| 15 | Անջատիչ գծային միաբևեռ 25Ա | հատ | 6 | 3.91 | 23.46 |
| 16 | Անջատիչ գծային միաբևեռ 32Ա | հատ | 8 | 4.11 | 32.87 |
| | *Ընդամենը* | | | | 11229.81 |
| | *Շահույթ 11%* | | | | 1235.28 |
| | *Ընդամենը* | | | | 12465.09 |
| | *ԱԱՀ 20%* | | | | 2493.02 |
| | *Ամբողջը* | | | | 13722.83 |

Կապալառուն աշխատանքները կատարելու է ք. Երևան, Կոմիտաս 35/2 հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
h/h 900013220026
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար

Վ. Հարությունյան ------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Աբակ» ՍՊԸ
Հասցե՝ Սի... 20 ...
ՀԷԲ Շահումյան մ/ճ
Հ/Հ 1630028028518
ՀՎՀՀ 01222825

Ա. Սարգսյան ------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
ՀՀ ԿԱՍԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
### «Երևան» տարածքային ստորաբաժանման արխիվային տարածքի նորոգման աշխատանքների կատարման

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | «Երևան» տարածքային ստորաբաժանման արխիվային տարածքի նորոգման աշխատանքներ | Պայմանագրի հաշվառման պահից սկսած | 20-րդ աշխատանքային օր |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար

Վ. Հարությունյան ____________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Աբակ» ՍՊԸ
Հասցե՝ Սիլիկյան թաղ. 1փ. 20տ
ՀԷԲ Շահումյան մ/ճ
Հ/Հ 163028028518
ՀՎՀՀ 01222825

Ս. Սարգսյան ____________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավ. նախ.չ/բ համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | |
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/2 | «Երևան» տարածքային ստորաբաժանման արխիվային տարածքի նորոգման աշխատանքներ | 9396000 | 9396000 | 9396000 | 9396000 | 9396000 | 9396000 | 9396000 | 9396000 | 9396000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար

Վ. Հարությունյան --------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Աբակ» ՍՊԸ
Հասցե՝ Միկոյան թաղ. 1փ. 20տ
ՀԷԲ Շահումյան մ/ճ
Հ/Հ 163028028518
ՀՎՀՀ 01222825

[illegible] Սարգսյան --------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
ՀՀ ԿԱԱԳԿԴԿ-ԳՀԱԾՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
ՀՀ ԿԱՍԳԿՊԿ-ԳՀԱԾՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ________________________-ին կնքված N ____________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ։

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն